

ԴԵՂԱՏՈՒՄ ՊԱՏՐԻՆՁԻ (Melissa officinalis L.) ԿԱՆՔԱՅԻՆ ՍՆՆԴԱԿՈՒԹՅԱՆ  
ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ ԲԱՅՈԹՅԱՆ ԳԻՐԱՊՈԽՆԿԱՅԻ ՊԱԾՍՎԱՆԵՐՈՒՄ

**Ներածություն:** Բույսերի հաճքային սննդառությունը այն կարևորագույն գործններից է, որից կախված է կենսաբանորեն ակտիվ միացությունների կենսակիրթեցի ինտենսիվությունը և ուղղվածությունը, ինչպես նաև բույսի արդյունավետությունը՝ ընդհանրապես: Բույսերի անհող մշակույթը հնարավորություն է ընծոռում կարգավորել հաճքային սննդառությունը բույսի անհատական զարգացման տարբեր փուլերում, ինչը նախադրյալներ է ստեղծում սննդանյութերի և ջրի նվազագույն ծախսի պայմաններում ապահովել առավելագույն բարձր բերք (Մայրապետյան, 1989): Բույսերի հաճքային սննդառության օպտիմալացման կարևորագույն փուլերը մեկը սննդալուծույթում կարևորագույն սննդատարրերի հարաբերակցության ծշգոտումն է (Դավթյան, 1967; Ջյուրիցկի, 1964, Պրահանիկով, 1963):

ՀՀ ԳԱԱ Գիդրոպոնիկայի պորբեմների ինստիտուտում կատարվել են բազմանյա գիտափորձեր մի շարք դեղատու (Եղերդակ սովորական - *Cichorium intybus* L., կատվալեզու եռարաժան - *Bidens tripartita* L., այուծագի հնգարաժան - *Leonurus quinquelobatus* Gilib. և այլն), եթերայուղատու (խորդենի վարդաբույր - *Pelargonium roseum* Willd., դաղձ պղպեղային - *Mentha piperita* L., սորգ կիտրոնային - *Cymbopogon citratus* Stapf. և այլն) և ներկատու (հինա ամփուշ - *Lawsonia inermis* L., բասմա շերտավոր - *Indigofera articulata* Gouan.) մշակաբույսերի հաճքային սննդառության օպտիմալացման ուղղությամբ, ստացվել են դրանց արդյունավետության բարձրացման մաքսամատիկական մոնթեները (Ալեքսանյան և ուրիշներ, 2005; Մայրապետյան և ուրիշներ, 1997; Մայրապետյան և ուրիշներ, 1999; Մայրապետյան, Տագեվօսյան, 1999; Mairapetyan et al., 1999; Mairapetyan, Tadevosyan, 2002; Tadevosyan, Mairapetyan, 1999): Դաստատվել է, որ սննդալուծույթում N,P,K-ի հարաբերակցությունը որոշակիորեն ազդում է բույսերի բերքատվության և կենսաբանորեն ակտիվ միացությունների կենսակիրթեցի խթանման վրա: Դաշվի առնելով դեղատու պատրինջի անհող աճեցման բարձր արդյունավետությունը և հեռանկարայնությունը, խնդիր դրվեց հետազոտել N,P,K-ի տարբեր հարաբերակցությունների ազդեցությունը դեղատու պատրինջի արդյունավետության վրա:

**Նույթ և մեթոդ:** Փորձերը դրվել են 2004-2005թթ. 0,16մ<sup>2</sup> մակերես ունեցող հիդրոպոնիկական վեգետացիոն անորմերում, որտեղ որպես լցանյութ օգտագործվել է հրաբխային խարամի և գլաքարի 1:1 հարաբերությամբ խառնուրդը: Բույսերը սննդվել են օրը 2 անգամ՝ Դավթյանի 0,75N լուծույթով<sup>3</sup> (Դավթյան, Մայրապետյան, 1976): N, P, K-ի հետևյալ երեք հարաբերակցություններով.

1. N<sub>70</sub>P<sub>15</sub>K<sub>15</sub> ատոմ%,
2. N<sub>15</sub>P<sub>70</sub>K<sub>15</sub> ատոմ%,
3. N<sub>15</sub>P<sub>15</sub>K<sub>70</sub> ատոմ%:

10 օրը մեկ կատարվել են միջանկյալ լվացող ջրումներ՝ արտեզյան ջրով: Փորձերը դրվել են 8-ական կրկնողությամբ: Կատարվել է 2 հար՝ հովհանն և սեպտեմբերին: Դարերը կատարվել են պարզ, արևոտ օրերին, առավոտյան ժամը 11-ին: Դեղահումքը չորացվել է ստվերում, լավ քամհարվող տեղում: Օդաչոր

<sup>3</sup> Մեր նախկին հետազոտություններից պարզվել է, որ պատրինջի բույսերն առավելագույն արդյունավետություն ապահովում են Դավթյանի 0,75N լուծույթով սննդվելու դեպքում:

դեղահումքում եթերայուղի պարունակությունը որոշվել է Գինզբերգի մեթոդով (Гинзберг, 1932): N, P, K-ի օպտիմալ հարաբերակցությունը ճշգրտելու, բույսի արդյունավետության և սննդալուծույթում N, P, K-ի հարաբերակցության միջև կորելյացիայի գործակիցը հաշվարկելու համար կիրառվել են Դոմեսի "սիստեմատիկ տարբերակների" (Homes, 1961) և Վախմիստրովի "Կորելյացիոն գոնդավորման" (Вахмистров, Воронцов, 1991; 1994) մեթոդները:

Աղյունավետությունը և ընդարձակում: Պատրինջի արդյունավետության վրա սննդալուծույթում N, P, K-ի տարրեր հարաբերակցությունների ազդեցության տվյալները ներկայացված են աղ. 1-ում:

Աղյուսակ 1  
Պատրինջի արդյունավետությունը սննդալուծույթում N, P, K-ի տարրեր հարաբերակցությունների դեպքում

Տարբերակ	Բույսի բերքատվությունը, գ/բույս			Եթերայուղի պարունակությունը, մ/100գ	
	1-ին հար	2-րդ հար	Ընդհանուր	1-ին հար	2-րդ հար
1	76,5	46,9	123,4	0,1500	0,3000
2	54,9	30,1	85,0	0,1250	0,2666
3	58,8	33,8	92,6	0,1500	0,3000

Ստացված արդյունքներից հետևում է, որ դեղահումքի առավելագույն կուտակման համար բույսերն, հատկապես, ազոտի կարիք են զգում, մինչեւ եթերայուղի առավելագույն պարունակությունը դիտվում է սննդալուծույթում ազոտի և կալիումի առավելագույն և համանասնական պարունակության դեպքում: Կիրառելով Դոմեսի "սիստեմատիկ տարբերակների" մեթոդ, ստացված փորձնական տվյալների օգնությամբ, տեսականորեն հաշվարկել ենք N, P, K-ի օպտիմալ հարաբերակցությունները, որոնք ապահովում են բույսի ամենաբարձր բերքատվությունը (աղ. 2) և եթերայուղի պարունակությունը (աղ. 3):

Աղյուսակ 2  
N,P,K-ի օպտիմալ հարաբերակցությունը (ատոմ%) և կորելյացիոն գործակիցը (r)  
պատրինջի դեղահումքի առավելագույն կուտակման համար

N, P, K-ի օպտիմալ հարաբերակցությունը	Կորելյացիայի գործակիցը
49:23:28 ատոմ% 1-ին հար	-0,9
52:21:27 ատոմ% 2-րդ հար	-1
50:22:28 ատոմ% Ընդհանուր	-1

Պարզվում է, որ սննդատարրերի նկատմամբ պատրինջի պահանջը վեգետացիայի ընթացքում որևէ փոփոխության չի ենթարկվում, այսինքն՝ ողջ վեգետացիայի ընթացքում կարելի է կիրառել N, P, K-ի հաստատում հարաբերակցությամբ սննդալուծույթ՝  $N_{50}P_{22}K_{28}$  ատոմ%: Այս փաստը գույք կարելի է բացատրել այն հանգանակով, որ մեկ վեգետացիայի ընթացքում կատարված 2 հարերի հետևանքով, փաստորեն, բույսերը կրկնել են աճման և զարգացման փուլերը:

Տվյալների ռեգրեսիոն վերլուծության հիման վրա տրվել են բույսերի բերքատվության բարձրացման մաթեմատիկական մոդելները՝ ռեգրեսիոն հավասարումների տեսքով, որոնք բնորոշում են առաջին հարի՝ (1), երկրորդ հարի՝

(2) և ընդհանուր բերքատվության (3) դեպքում սննդարար լուծույթում N,P,K-ի օպտիմալ հարաբերակցությունից շեղման (X, ատոմ %) ազդեցությունը բույսի բերքատվության վրա (Y, գ/քույս):

$$Y = 88,34 - 0,68X \quad (1)$$

$$Y = 56,73 - 0,54X \quad (2)$$

$$Y = 150,93 - 1,38X \quad (3)$$

Եթե շեղումը՝ X=0, այսինքն՝ իրավես ընտրված է N, P, K-ի օպտիմալ հարաբերակցություն, ապա բույսի ընդհանուր բերքատվությունը կկազմի է 150,93գ, իսկ 1ատոմ% շեղման դեպքում բույսի բերքատվությունը կնվազի 1,38 գրամով:

Նմանատիպ հաշվարկներ կատարվել են նաև պատրինջի դեղահումքում եթերայուղի պարունակության առումով (աղ. 3): Պարզվել է, որ վեգետացիայի ընթացքում, տարբեր հարերի դեպքում, եթերայուղի սինթեզի առավելագույն ինտենսիվության համար բույսերը նախընտրում են սննդալուծույթում N, P, K-ի միևնույն հարաբերակցությունը: Ուստի, այս դեպքում ևս, ողջ վեգետացիայի ընթացքում կարելի է կիրառել N, P, K-ի հաստատում հարաբերակցությամբ սննդալուծույթ՝ N<sub>38</sub>P<sub>24</sub>K<sub>38</sub> ատոմ%:

### Այլուսակ 3

N,P,K-ի օպտիմալ հարաբերակցությունը (ատոմ%) և կորելյացիոն գործակիցը (r) պատրինջի հումքում եթերայուղի առավելագույն պարունակության դեպքում

N, P, K-ի օպտիմալ հարաբերակցությունը	Կորելյացիայի գործակիցը
38:24:38	-1
1-ին հար	
37:26:37	-0.98
2-րդ հար	

Եթերայուղի պարունակության տվյալների ռեգրեսիոն վերլուծությունը թույլ է տալիս բնորոշել տարբեր հարերի դեպքում սննդարար լուծույթում N, P, K-ի օպտիմալ հարաբերակցությունից շեղման (X, ատոմ%) ազդեցությունը բույսում եթերայուղի պարունակության վրա (Y- եթերայուղի պարունակությունը, մլ/100գ):

$$Y_1 = 0,2150 - 0,002X \quad (\text{առաջին հար}) \quad (4)$$

$$Y_2 = 0,4284 - 0,0038X \quad (\text{երկրորդ հար}) \quad (5)$$

Եթե X=0, այսինքն ընտրված N, P, K-ի հարաբերակցությունը իսկապես օպտիմալ է, ապա առաջին հարի օդաչոր հումքում եթերայուղի քանակությունը կկազմի 0,2150, իսկ երկրորդում՝ 0,4284 մլ/100գ:

Քանի որ եթերայուղի ելք կախված է ինչպես կենսազանգվածի կուտակման, այնպես էլ եթերայուղի սինթեզի ինտենսիվությունից, ապա որա առավելագույն սպասվող քանակի տեսական հաշվարկը կատարել ենք 2 խմբով՝ օգտվելով (1), (2), (4) և (5) մաթեմատիկական մոդելերից: Նախ՝ եթերայուղի ելք հաշվարկվում է բույսերի կենսազանգվածի առավելագույն կուտակման համար N, P, K - ի օպտիմալ՝ 50:22:28ատոմ%, հարաբերակցությամբ սննդալուծույթում աճեցնելու դեպքում, ապա այն հաշվարկվում է եթերայուղի առավելագույն պարունակություն ապահովող N, P, K-ի օպտիմալ՝ 38:24:38ատոմ% հարաբերակցությամբ սննդալուծույթում մշակելու դեպքում:

Դաշվարկները ցույց են տալիս, առաջին խմբի ժամանակ առաջին հարում մենք կստանանք 0,17, երկրորդ հարում՝ 0,21 և, բնականաբար, ամրող բույսից՝ 0,38նգ եթերայուղ: Երկրորդ խմբի դեպքում այդ բվերը կկազմեն 0,174, 0,208 և 0,382նլ, համապատասխանաբար: 0,38 և 0,382նլ հրարից գործնականում չեն տարբերվում, ուստի կարելի է կիրառել բույսի բարձր բերքատվություն ապահովող օպտիմալ սննդալուծույթը:

**Եզրակացություն:** Դավթյանի 0,75N սննդալուծույթում N, P, K-ի հարաբերակցությունը զգալիորեն ազդում է դեղատու պատրիճի բերքատվության և եթերայուղի պարունակության վրա, ընդ որում ողջ վեգետացիայի ընթացքում բույսերի պահանջը N, P, K-ի հարաբերակցության նկատմամբ մնում է անփոփոխ: Պատրիճի հիդրոպոնիկ մշակույթում առավելագույն արդյունավետություն է պահպում Դավթյանի 0,75N սննդալուծույթում  $N_{50}P_{22}K_{28}$  ատոմ% հարաբերակցությունը:

Buniatyan R.J., Tadevosyan A.H.

## OPTIMIZATION OF MINERAL NUTRITION OF LEMONBALM UNDER OPEN-AIR HYDROPONIC CONDITIONS

### Summary

The ratio of N,P,K in the nutrient solution influences on yield and essential oil content of Lemonbalm. The plants' demand of N, P, K ratio is invariable during the vegetation.

The maximum productivity of Lemonbalm in hydroponics culture provides with  $N_{50}P_{22}K_{28}$  atom% in Davtyan's 0,75N nutrient solution.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալեքսանյան Զ.Ս., Թաղկոսյան Ա.Շ., Ստեփանյան Բ.Թ., Ստեփանյան Ա.Ս. Սովորական եղերդակի արդյունավետությունը և ֆիզիոլոգա-կենսաքիմիական առանձնահատկությունները անհող մշակույթի պայմաններում.-ՀՊՀ „Զաղորդումներ,, թիվ 30, Երևան, 2005, էջ 25-30:
2. Դավթյան Գ.Ս., Մայրապետյան Ս.Խ. Վարդարույր Խորդենու անհող արտադրությունը.- Երևան, 1976, 134էջ:
3. Մայրապետյան Ս.Խ., Թաղկոսյան Ա.Շ., Ալեքսանյան Զ.Ս., Ստեփանյան Բ.Թ., Քյալոյան թ.Ա. Հիդրոպոնիկայի պայմաններում մննթուային դադի հանքային մննդառության օպտիմալացումը և արդյունավետության բարձրացման մաթեմատիկական մոդելավորումը.- ՀՊԻ „Զաղորդումներ,, թիվ 28, Երևան, 1997, էջ 17-22:
4. Մայրապետյան Ս.Խ., Ալեքսանյան Զ.Ս., Թաղկոսյան Ա.Շ., Ստեփանյան Բ.Թ., Բունիաթյան Ռ.Ժ., Գասպարյան Ա.Վ. Յնգարաժան առյուծագու անհող աճեցման հնարավորությունը և արդյունավետությունը, ֆիզիոլոգա-կենսաքիմիական և դեղաքիմիական առանձնահատկությունները.-ՀՊԻ „Զաղորդումներ,, թիվ 29, Երևան, 1999, էջ 11-16:
5. Вакхмистров Д.Б., Воронцов Б.А. Соотношение элементов минерального питания в среде и рост растений. 1. Исследование формы купола отклика.-Физиология растений, 1991, #1, с. 56-64.
6. Вакхмистров Д.Б., Воронцов Б.А. Соотношение элементов минерального питания в среде и рост растений. 3. Корреляционное зондирование купола отклика.- Физиология растений, 1994, # 3, с. 425-429.
7. Гинзберг А.С. Упрощенный способ определения количества эфирного масла в эфироносах.-Хим. фарм. пром., 1932, # 8-9, с. 382-385.
8. Давтян Г. С. Проблема питательного раствора в производстве растений без почвы.-Сообщ. ИАПиГ АН АрмССР, 1967, № 7, с. 11-19.
9. Журбцицкий З. И. Питательные смеси для различных культур. - Агрономия, 1964, № 2, с. 42-61.

10. Майрапетян С.Х. Культура эфиромасличных растений в условиях открытой гидропоники, Ереван, 1989, 313с.
11. Майрапетян С.Х., Татевосян А.О. Оптимизация минерального питания растений в условиях гидропоники, Ереван, 1999, 231с.
12. Прянишников Д.Н. Избранные сочинения. Агрохимия, М.: Сельхозиздат, 1963, т.1, 735 с.
13. Homes M. V. L. *Alimentation mineral equilibree des Vegetaux*. Wettern Universa, 1961, v. 1, p. 55.
14. Mairapetyan S.Kh., Tadevosyan A.H. Optimising mineral nutrition in hydroponics.- Practical Hydroponics and Greenhouses, Australia, 2002, # 64, p. 59-62.
15. Mairapetyan S.Kh., Tadevosyan A.H., Alexanyan J.S., Stepanyan B.T. Optimization of the N,P,K ratio in the nutrient medium of some soilless aromatic and medicinal plants.- *Acta Horticulture*, 1999, 502: 29-32.
16. Tadevosyan A.H., Mairapetyan S.K. Optimization of *Lawsonia inermis* L. and *Indigofera articulata* Gouan. Productivity under open-air hydroponic conditions.- *Acta Horticulture*, Belgium, 1999, p. 321-325.